

— Շատ բանաստեղծներ են գրել հայրենի երկրի ու նրա մարդկանց մասին, հայրենիքի, որպես ընդհանուր հովատագրի մասին՝ ժամանակի և պատմության մասնաբերով։— առում է նա։— Քչերին է հաջողվել մի բանի տուրով զարմանալի պարզությամբ և ցայտունությամբ ստեղծել հայրենիքի անկրկնելի, տեսանելի կերպար, որն ասես հասնում է զարեի խորքի և միևնույն ժամանակ ուղղված է ապագային, մարդկային պարզ արտահայտություններով հաղորդել իր խորին որդիական սերը։ Այդպիսի բանաստեղծությունների միջոցով հեռավոր ընթերցողն անգամ հասնում, իր համար հայտնաբերում է ժողովրդին ու երկիրը, հասկանում և նաեւում է նրան, երբ հրաշքով տեսնում է այն հողը, որը ներշնչել է բանաստեղծին։

Ավետիս Իսահակյանի պոեզիան մի հիմն է ի պատիվ մարդու, զնգեցիկ ու լուսավոր կյանքի համար նրա պայքարի։

Այնուհետև ելույթ ունեցան՝ Մոլղապիայի գրողների միության վարչության Բարտուղար Ի. ՉՈՐԱՆՈՒՆ, Լատվիայի կոմկուսի Կենտկոմի կուլտուրայի բաժնի վարիչ Ա. ԳՈՐԻՍԸ, Կիրգիզիայի գրողների միության վարչության առաջին Բարտուղար Տ. ԱՍԿԱՐՈՎԸ, Քուրմենական ՍՍՀ պատվիրակության ղեկավար, Քուրմենիայի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, գրող Կ. ԿՈՒԼԻՆՎԸ, Էստոնացի գրող Լ. ՄԵԼԻՆ, Ռուստավի աշխատավորության պատվիրակության ղեկավար, կուսակցության Պրոլետարականության շրջկոմի Բարտուղար Ս. ՇԵՂԱԳԻՆԸ, Կարաբաղ-Քալկաթայի ժողովրդական բանաստեղծ Կ. ԿՈՒԼԻՆՎԸ, Ֆրանսիացի նշանավոր հայագետ, պրոֆեսոր ՖԵԴԵՐԻԿ ՖԵՅԻՆ, ամերիկացի գրող ՎԱՆԷ ՀԱՅԿԸ։

Հանրապետական հորելյանական հանձնաժողովի Բարտուղար, բանասիրական գիտությունների դոկտոր Լ. ՀԱԽԻՆԻՔՅԱՆԸ ի սրտե շնորհակալություն հայտնեց հանդիսություններին մասնակցած՝ հայ մեծ բանաստեղծի բա-

նկամներին, քաղամանիշներին ու հրատարակիչներին, այն գրքերի և ժողովածուների հեղինակներին, որոնք լույս են բնծայվել Մոսկվայում, Անիկոբադում, Եղրայրական միութենական հանրապետություններում։

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին Բարտուղար Կ. Ս. ԳԵՐԻՄՈՎՅԱՆԸ, փակելով հանդիսավոր նիստը, ասաց, որ պոեզիայի ուրախ տոներ քայլում է սոցիալիստական Հայաստանի հողով։ Այն մեր սրտերը է՛լ ավելի է համակում սիրո, Եղրայրական միաբանության և մեր սոցիալիստական հայրենիքի համար ունեցած հպարտության զգացումով։ Նպատում մեր ժողովուրդների եղրայրական զբաղակցությունների հետագա մերձեցմանն ու փոխազդեցությանը։

Հայ մեծ բանաստեղծ Ավետիս Իսահակյանի ծննդյան 100-ամյակի համաժողովրդական տոնակատարությունը վերածվեց մեր մեծ հայրենիքի ժողովուրդների անխորտակ բարեկամության ու միասնության, Սովետական Միության կոմունիստական կուսակցության լենինյան ազգային ֆաղսականության հաղթանակի հուզիչ ցույցի։ Պարծավ սովետական բազմազգ կուլտուրայի տոներ։

Նա խորին շնորհակալություն հայտնեց ՍՍՀՄ գրողների միության վարչությանը, համամիութենական հորելյանական կոմիտեի անդամներին, Եղրայրական միութենական հանրապետություններից եկած բոլոր հյուրերին՝ մեծ վարպետի հասցեին, հայ մշակույթի հասցեին ասված սրտաբուխ, շերտ խոսքերի համար, իսահակյանական հանդիսություններին մասնակցած արտասանման բոլոր հյուրերին։

Հայ մեծ բանաստեղծ Ավետիս Իսահակյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հանդիսավոր նիստը հայտարարվում է փակված։

Դանիելում վեհուրեւ նշում են Սովետական Միության և Հայկական ՍՍՀ-ի պետական հիմների մեղեդիները։

(ԱՐՄԵՆՊՐԵՍ)

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԵՐԵՎԱՆԻ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Սովետական բազմազգ մշակույթի ականավոր վարպետների շարքում Ավետիս Իսահակյանի անունը իրավամբ զբաղում է ամենապատվաբեր տեղերից մեկը։ Սովետահայ մեծ հայրենասեր բանաստեղծը, նշանավոր հասարակական գործիչը արվեստագետի իր պատվավոր առաջնությունն էր համարում ծառայել հայրենիքին, կոմունիզմի իդեալներին։ Ավետիս Իսահակյանը բանաստեղծական ոգիչուն խոսքով, կրճատ

հրապարակախոսությամբ փայլուն էջ գրեց սովետական ժողովուրդների բարեկամության ու եղրայրության ոսկե զբոսով։ Նրա ստեղծագործությունը դիտեն և սիրում են ոչ միայն Սովետական Միությունում, այլև արտասահմանում։ Ուստի, Հայաստանի այդ նշանավոր զավակի ծննդյան 100-ամյակը յայնուրեւ նշվեց բոլոր եղրայրական միութենական հանրապետություններում, աշխարհի շատ երկրներում։ Հորելյա-

նական հանդիսությունների եզրափակիչ ակօրդը եղավ նոյեմբերի 14-ին Սովետական Միության Մեծ քառուղում կայացած երեկոն:

Քեմի խորհում Ավետիք Խահակյանի դիմանկարն էր՝ զամենհնչույով Երիզված: Շուրջը դրված էին ծաղիկներ:

Մեծ բանաստեղծի և բաղաճացու հիշատակին պատշաճ մատուցելու համար այստեղ էին հավաքվել արտագրության առաջավորներ, գիտություն և մշակույթի գործիչներ, Մոսկվայի հասարակայնության ներկայացուցիչներ:

Դահլիճում էին գտնվում կուսակցության և կառավարության ղեկավարներ Վ. Վ. Գրիբոյնի, Ա. Պ. Կիրիլևիկին, Ա. ՅԱ. Պեկոն, Ս. Ն. Պոնոմարև, Գ. Ֆ. Ռոստոմով, Վ. Ի. Գոմիշ, Կ. Ֆ. Կոստոմով:

Նախագահությունում էին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին ֆարտուղար Կ. Ս. Գեմբլիսկին, հայկական հանրապետության Պերագույն սովետի նախագահության նախագահ Ս. Ի. Սարգսյան, հանրապետության Մինիստրների սովետի նախագահ Գ. Ա. Արզումանյան, ՍՍՀՄ Պերագույն սովետի նախագահության ֆարտուղար Մ. Պ. Գեմբլիսկին, ՍՍՀՄ Մինիստրների սովետի նախագահի տեղակալ Վ. Ի. Կոմարով, սովետական բազմազգ զբաղմունքի պատվիրակներ: Երեկոյին ներկա էին նաև ՍՄԿԿ Կենտկոմի անդամ ԱՆԱՍԱՍ ՄԻՈՅԱՆ, Սովետական Միության մարշալ Հովհաննես ՐԱՎՐԱՄՅԱՆ, բանաստեղծի ուղիք՝ Վ. Ա. Խահակյանը, բոլոր՝ Ա. Վ. Խահակյանը:

Երեկոն բացեց համամիութենական հորեյանական կոմիտեի նախագահ, Սոցիալիստական աշխատանքի հերոս Ա. Ա. Սոմով: Մշակույթի բնագավառում, — ասաց նա, — սովետական ժողովուրդների հոգևոր կյանքում հաջողությունների վառ վկայությունը Սովետական Միության մեծ ու փոքր ժողովուրդների զբաղմունքի և արվեստի բուռն, բերկրալի ահն է:

Ինչպես ոչ մի ուրիշ երկրում, մեզ մոտ լայն է ընթերցողների պահանջկոտ լսարանը: Իմ հանի ու մեծ է ժողովրդական լայն զանգվածների հետաքրքրությունը զբաղմունքի նկատմամբ, գասականների և խոշորագույն սովետական գրողների հորեյանական տարբերք մեր երկրում նշվում են ուրախ մշակույթի մեծ տոներ: Ժողովրդի կողմից հարգված այդպիսի տարբերվելն է պատկանում հայ մեծ բանագրու Ավետիք Խահակյանի ծննդյան 100-ամյակը, որի պաշտոն հիշատակի հանդեպ խոր հարգանքն ու նրա անմահ բանագրության նկատմամբ սերը այսօր մեզ հավաքել են այս վեհաշուր գահին:

Ավետիք Խահակյանը ապրել է մեծ ու երկար կյանք, որը լի էր ցարական բանտերի և

ախոռի դաժան փորձություններով, օտար ափերում տասնամյակների քափառումներով: Հավատարիմ լինելով իր պատանեկության ուխտին, բանաստեղծը հայրենի երկրից հեռու գտնվելով էր ժողովրդի երջանիկ ապագայի անմահ հույսը: Իմ այդ ապագան եկավ այն բերկրալի օրը, երբ նրա Հայաստանի վրա փողփողաց հաղթական Հոկտեմբերի կարմիր դրոշը:

Երեսնական քաղաքներից վերադառնալով հայրենի երկիր, լիարժեք շնչելով վերածնված հայրենիքի օդը, բանաստեղծը, նրան դիմելով, գրում է.

*Այնքան ժամանակ, որ պիտի հերկե,
Սևահողը հին՝ թո կտրիճ որդին,
Եվ գուսանը վառ՝ սերը պիտի երգե,
Դու պիտի ծաղկես, երկիր հայրական,
Թո ողով, ոճով և բարձրագույն,
Դու պիտի հնչես, հնչես հաղթական,
Իմ հին հայ լեզու՝ քաղցր ու սրտաբուխ:*

Եղբայր հայ ժողովուրդը բերկրանքով, սրտաբուխ տոնահանգներով նշեց իր փառապանծ գավաթի հորեյանական տարեկոյնը: Այդ օրերին ամբողջ Սովետական Միությունում հնչում էին նրա բանագրության հուզաբարավ, անմահ տողերը:

Համամիութենական հորեյանական կոմիտեի, ՍՍՀՄ գրողների միության և ՍՍՀՄ կուլտուրայի մինիստրության, Հայկական ՍՍՀ գրողների միության և կուլտուրայի մինիստրության հանձնառության մ. Ա. Սուրկովը երեկոն հայտարարում է բացված:

Ձեկուցման համար խոսքը տրվում է Հայաստանի կոմկուսի Կենտկոմի ֆարտուղար Հ. Մ. Ռոմանովին:

— Մեծ բանաստեղծի ստեղծագործական ուղին, — ասաց նա, — խառնված էր ժողովրդական ակունքների վրա, հայրենի երկրի հետ ունեցած անխզելի կապերի վրա, նրա ամբողջ ստեղծագործությունը՝ սկսած խորունկ ու հուզաբարավ բանագրությունից մինչև «Սասնա Մհեր» և «Ուստա Կարո» էպիկական կտավները, հիմնված, ժողովրդային է:

Մարզկանց և ժողովուրդների հակառակ դասին փոխադասական խորհրդածությունները, ժողովրդական մտածողության և ժողովրդական բնական գունագեղ աշխարհից եկող նրա գեղադրական սկզբունքների և բարոյագիտական արժեքների ամբողջ երկնաշրջանը, մեծ վարպետի հանձնարով վերաձուլվելով բանաստեղծական շղերագրված ձևերի մեջ, արդեն Խահակյանի ստեղծագործության ամենավաղ շրջանում վերադառնում էր ժողովրդին, երգվում ուրախ ժողովրդական երգեր, ամենալայն մասսայականությունը վայելում աշխատա-

վոր զանգվածների շրջանում: Քերես հենց դա է Ավետիկ Խահակյանի ստեղծագործական իսկական ժողովրդայնության ամենաարժեքավոր և ամենալիակատար նախադրումը:

Ամբիոնի մոտ է սոցիալիստական աշխատանքի հերոս է. Բ. Մեծել(ԱՅՏԻՍԻ):

— Ես. լիտվացի բանաստեղծս,—ասաց նա,— հպարտ եմ, որ այստեղ կարող եմ իմ խոսքն ասել ի պատիվ Ավետիկ Խահակյանի: Ամեն մի ժողովուրդ իրավունք ունի հպարտանալու իր բանաստեղծով. որի ստեղծագործություններն օրգանապես միահյուսվում են ուրիշ ժողովուրդների ազգային մշակույթին: Այս հանդիսավոր օրերին հայ պոեզիայի կախարհ Ավետիկ Խահակյանի անունը սարե տառերսով է զրկված Բալթիկայի ափերին: Նրա բանաստեղծությունների լիտվերեն նոր բարգմանություններն օգնեցին ավելի լավ նախաշնորհ և սիրելու Հայաստանի ականավոր բանաստեղծին: Նրա անունն է այսօր մեզ բերել այստեղ՝ մեզ հարազատացած Մոսկվա. հենց բանաստեղծի խոսքերով ասած՝ եղբայրության տոնին: Հայ ժողովրդի տոնը դարձել է բե՛լ լիտվացու, բե՛լ ուսուի և բե՛լ ղազախի տոնը. որովհետև Խահակյանը մեր ընդհանուր մշակույթի փառն է:

Ավետիկ Խահակյանի ստեղծագործությանը էս ծանոթացա պատերազմի դժնդակ տարիներին. շարունակեց է. Բ. Մեծելյանիսը: Այն ժամանակ էս սովետական երկրի դեռ երիտասարդ ֆաղաֆաղի էի. երիտասարդ զինվոր ու երիտասարդ բանաստեղծ: Ռազմաճակատային խրամատներում ձեռքս բերեցի Խահակյանի բանաստեղծությունների միատորոշակը, հենց այն ժամանակ առաջին անգամ կարդացի նրա բոցաշունչ հրապարակախոսությունը:

Սովետական զրականության մեծերի փառավոր համաստեղության մեջ, այնպիսի հեղինակավոր անունների կողքին, ինչպիսիք են Ալեքսեյ Տոլստոյը, Միխայիլ Շոլոխովը, Յանկա Կուպալան, Ալեքսանդր Ֆադեևը, Լյա Քրեմլովը, Նիկոլայ Տիխոնովը, Ալեքսեյ Սուրկովը, Պավլո Տիխոնովը, Գեորգի Լեոնիդեն, Սալոմեյա Ներիսը, Կոնստանտին Սիմոնովը ինձ համար կանգնած է եղել նաև Ավետիկ Խահակյանը:

Մեծ վարպետը ինձ երեք բան է սովորեցրել. որպես երիտասարդ ֆաղաֆաղս ինձ սովորեցրել է սովետական հայրենասիրություն, որպես երիտասարդ զինվորի՝ ատելություն ֆաշիզմի նկատմամբ և որպես երիտասարդ բանաստեղծի սովորեցրել է պոեզիա:

Դա լավ դպրոց էր: Գիտակցությանս մեջ խորապես քափանցել են նրա փիլիսոփայական էպոսի կերպարներն ու խոհերը և առաջին հերթին «Լիրու-Լալա Մահարի» պոեմը:

ՍՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր ՍԻՎԼԻ ԿԱՊՈՒՏԻՅԱՆԻ իր ելույթում ասաց.

— Ամբողջ Հայաստանը, նրա ամբողջ ժողովուրդը, նրա և՛ արարատը և և՛ Կապադոկիան, և՛ Մուհրանը, և՛ Բաղրամը և Վանքը, մարդիկ ասես լուսավորված են Խահակյանի անունով, նրա պոեզիայով, նրա կենդանի հիշատակով: Հենց այդ սերը, այդ ակնածանքը տեսնում եմ իմ ազգային Խահակյանի 100-ամյակին ժամանած բազմաթիվ հյուրերը: Եվ բանաստեղծի երկրի հետ այդ կենդանի շփումը նրանց օգնեց էլ ափսոսանքով խոր հասկանալու Խահակյանին, իսկ դա նշանակում է՝ նաև Խահակյանի ժողովրդին, դա Հայաստանն է՝ ավելի մերձեցրեց նրա բարեկամների հետ, է՛լ ավելի մերձեցրեց մարդկանց: Մեր հյուրերի մեջ կային նաև սփյուռքահայ գրողներ և նրանք չէին կարողանում իրենց արցունքները զսպել, տեսնելով, թե ինչպես են հենում Խահակյանի բանաստեղծությունները մեր երկրի շատ ժողովուրդների լեզուներով, թե ինչպիսի պատվով ու անսահման հարգանքով է շրջապատված հայ բանաստեղծի հիշատակը:

Խրեկոյին Ավետիկ Խահակյանի ստեղծագործության անանց նշանակության մասին իր մտորումները կիսեց ԲՍՀՄ-ի Մ. Գորկու անվան պետական մրցանակի դափնեկիր ՄԻԽԱՅԻԼ ԳՈՒՊԻՆ:

Ավետիկ Խահակյանի կյանքի օրինակով, ասաց նա, մենք կարող ենք մեզ համար պարզել այն հրաշալի նշմարտությունը, որ աշխարհի վերակառուցման մեծ գործը հաղթանակ է սկսել սեփական անձինք: Նրա ստեղծագործության օրինակով մենք կարող ենք շատ համոզիչ կերպով հասկանալ, որ բանաստեղծ լինելը ոչ թե մասնագիտություն է, այլ նակատագիր, որի վրա ժամանակն իր բոլոր նյարդային թելերը խաչաձևում է մեկ բարախող հանգույցի մեջ: Նրա պոեզիայում կա մարդասիրություն և մարդկայնություն: Նա ընդօրինակման արժանի տիպար է: Նա իր ստեղծագործությամբ մարդկանց հաղորդակից էր դարձնում մարդկային եղբայրության ներդաշնակությանը: Սա է նրա անզնահատելի վստահար պոեզիայի հանդեպ, իր ժողովրդի հանդեպ, մեր հայրենիքի ժողովուրդների լենինյան եղբայրության հանդեպ, մարդկության հանդեպ:

«Մարդու կյանքի բովանդակությունը ամբողջ տիեզերքն է»: Այսպես էր ասում Ավետիկ Խահակյանը: Աշխարհի զավակը, իր Հայաստանի հավատարիմ զավակը նրան սիրում էր ամենահավատարիմ որդիական սիրով, և իր առջև բացված համաշխարհային համապարփսկ սիրո բոլոր ակունքներով:

Քո հոգուն մեռնում, անգին հայրենիք,

Ա՛խ, քիչ է, թե որ մի կյանքով մեռնեմ,

Երեկ ունենամ հապար ու մի կյանք,

Հազարն էլ սրտանց թեղ մատաղ անեմ:

Եվ նա կատարեց իր խոստումը, իր երգերի հազար կյունքն էլ նվիրաբերեց մի միակ սի-
տուն՝ իր հավերժ Հայաստանին:

Այս սողերը Ավետիք Խահակյանը գրել է 1926 թվականին, երբ առաջին անգամ եկավ հարսկատ Հայաստան, որտեղ աշխատավորը լինեմ էր դարձել իր սուրբ աշխատանքի և իր ազնիվ հացի տեր:

Ինչ համար առանձնապես հանելի է վերնիշել, այնուհետև նշեց հոնտորը, որ իմ ֆաղափում, նևայի վրա, համաշխարհային պատմության մեծ իրադարձությունների նախօրեին Ռուսաստանի հանճարեղ բանաստեղծ Ալեքսանդր Բլոկը այնքան, ես կասեի, սրբազան սիրով և քարզմանում իր գրչեղբայր Ավետիք Խահակյանի բանաստեղծությունները, դրանք առաջինը հաղորդակից դարձնելով համաշխարհային մշակույթին: Քաղաքացիական սխրանք կարելի է անվանել նաև այն փաստը, որ մի ուրիշ ռուս նշանավոր բանաստեղծ՝ Վալերի Բրյուսովը, այդ նույն՝ 1916 թվականին լույս ընծայեց հայկական տղեզիայի անթուղիա և դրանով բացահայտեց ու աշխարհին ցույց տվեց հայ ժողովրդի գեղեցիկ հոգին:

«Ավետիք Խահակյանի բանաստեղծությունների գեղեցիկ բազմազանության մեջ ապրում է

խակական մեծ պոեզիայի ոգին: Այդ բանաստեղծությունների էրսոժությունը զարմանահրաշ է: Այս նշմարիտ խոսքերը պատկանում են պեղիանների եղբայրության հետևողական պոե-
պագանդիստ, հրաշալի ռուս բանաստեղծ Նիկոլայ Տիխոնովին, որն Ավետիք Խահակյանի բանաստեղծությունների բարգմանչներից մեկն է: Եվ այդ խոսքերին չի կարելի չհամաձայնել:

Եվ ես, առաջին անգամ բարգմանելով Ավետիք Խահակյանի բանաստեղծությունները ռուսերեն, ասես առնչվեցի հայ ժողովրդի ոգու բուն էության հետ: Եվ այդ հանապարհորդությունը դեպի պեղիայի հոգևոր աշխարհի խոր-
ներ տոն և ինձ համար:

* * *

Այնուհետև Հայկական ՍՍՀ-ի և Մոսկվայի արվեստի վարպետների ուժերով տրվեց հոխ համերգ: Մեծ քառոնի կամարների տակ հրն-
շում էր մեծ բանաստեղծի և ֆաղաքացու՝ Ավետիք Խահակյանի անմահ խոսքը:

Մ. ՌՈԺԴԵՍՏՎՆՍԿԻԱՆ,

Ի. ՎԵԿՍԵՐ

Պ. ԿՈՍՈՒՊՈՒՎ

(ԱՐՄԵՆՊՐԵՍ-ի հատուկ լրագրիցներ)

ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՎԵՏԻՔ ԽԱՀԱԿՅԱՆԻ ԾՆՆԳՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

Հոկտեմբերի 20—21-ը տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԽ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական նստաշրջանը՝ նվիրված Ավետիք Խահակյանի ծննդյան 100-ամյակին: Նստաշրջանը բացեց ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը:

— Մենք այսօր սիրով ու հարգանքով ենք նշում Ավետիք Խահակյանի ծննդյան 100-ամյակը:— ասաց նա:— Մեծանուն բանաստեղծը իր գործերով ընդմիշտ մնացել է մեր սրտերում և այսօր բոլորիս համար մեծ պատիվ է ներկայիս նրա հորեղյանին նվիրված այս միջոցառմանը: Խահակյանը զգացմունքի մեծ երգիչ է: Նա իր երկերում ամենապարզ ու ամենասրտա-
մուտ ձևով արտահայտել է իր ժողովրդի զգաց-
մունքները: Նա նաև բանականության երգիչ է, որն իր բանաստեղծություններում բողոքի ձայն է բարձրացնում ընդդեմ սոցիալական անարդարությունների: Խահակյանը շատ բան է արել նաև սովետական բաղամազ կոլտուրայի զարգացման համար: Նա իսկական սովետա-
կան մեծ քաղաքացի է, որի պոեզիան ու գա-

ղափարները մոտ ու հարազատ են նաև մեր երկրի մյուս ժողովուրդներին: Եվ պատահա-
կան չէ, որ այսօր մեզ հետ հայ ժողովրդի մեծ զավակի հորեղյանը սիրով ու հարգանքով են նշում սովետական եղբայր ժողովուրդները:

Գիտական նստաշրջանում զեկուցումներով հանդես եկան ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամներ Ա. Ղանայանյանը («Ժողովրդական ավանդությունների խահակյանական մշակումները»), և է. Զրբաշյանը («Արու-լայա Մահարին» և ռոմանտիկական պոեմի ավանդույթները), բանասիրական գիտությունների դոկտորներ Ս. Աղաբաբյանը («Խահակյանը և արդիականությունը»), Վ. Առաքելյանը («Խահակյանի լեզվի և ոճի առանձնահատկությունները»), արվեստագիտության դոկտոր Մ. Մուրադյանը («Ավետիք Խահակյանի պոեզիան երաժշտության մեջ»), բանասիրական գիտությունների թեկնածուներ Վ. Մանցա-
կանյանը («Մեծ բանաստեղծն ու քաղաքացի-
ն»), և Ալեքսանյանը («Համաշխարհային և ռուսական գեղարվեստական ավանդույթները Խահակյանի արձակում»), Ա. Զաքարյանը